

The Baptist Tabernacle of Los Angeles

Mailing Address:
P. O. Box 15308
Los Angeles, CA 90015
Phone: (213) 744-9999

E-mail: rhymersjr@sbcglobal.net
www.sermonsfortheworld.com
www.baptisttabernacle.com



Jack Ngann
Pastor

Dr. R. L. Hymsers, Jr.
Pastor Emeritus

Դեկտեմբեր, 2021

Միբեյի ընկեր:

Ինչքան մեծ են մեզ չարչարող փորցանքները, և ինչքան ավելի մեծ է մեր Աստծո քարոթությունը! Այս տարի Հունվար ամսին իմ աստուածապաշտ և սիրելի կինը Իլիանան կորոնայով հիվանդացավ: Վախեցա որ իրեն կորցնելու եմ: Մեր եկեղեցին անդադար աղոթեց: Նաև հովիվներ և բոլոր աշխարհում տեղյակ Քրիստոնյաններ նրա համար աղոթեցին և քաջալերական ու օրհնաբեր պատգամներ ուղարկեցին: Փակիստանում մի քարոզիչ ամեն առավոտ իրեն հեռաձայնում էր! Աստուած պատասխանեց, և իմ կինը կատարելապես առողջացավ! Խորապես շնորհակալ եմ բոլոր նրանցից որ նրա համար աղոթեցին:

Իմ կյանքի համարը միշտ եղել է Փիլիպեցիս 4:13 որը ասում է,

“Գիտեմ պակասություն քաշել, և ավելությունով լինելն էլ. ամեն բանի մեջ ամենին լավ տեղեկացած եմ՝ կշտանալն էլ սովելն էլ. ավելությունով ունենալն էլ, պակասություն քաշելն էլ: Ամեն բան կարող եմ ինձ գորացնող Քրիստոսով:” (Փիլիպեցիս 4:12, 13)

Քրիստոս ինձ և Իլիանային գորացրեց նրա հիվանդության ժամանակ: Եւ Քրիստոս մեզ գորացրեց երբ մենք ցնծում և շնորհակալություն էինք հայտնում Նրանից կնոջս բժշկելու համար: “Ես **ամեն** բան կարող եմ անել ինձ գորացնող Քրիստոսով:”

Մարտ 24-ին մեր հին շենքը Լոս Անջելեսում վերջապես ծախվեց: Այդ շենքը այժմ Կորեական եկեղեցու է պատկանում : Հասույթը օգտագործվում է վերանորոգելու մեր նոր եկեղեցու շենքը Սան Գաբրիելում: Ջաք Գանը մեր եկեղեցու նոր քարոզիչն է, “Չինական Մկրտչական Եկեղեցին Մեծ Լոս Անջելեսում:”

Ապրիլ 11-ին մենք բոլորս հանդիպեցինք շքեղ Բեվերլի Հիլզ հիւրանոցում տոնելու իմ 80 ամեակը, որը տեղի ունեցավ մյուս օրը: Բազում շնորհավորանքներ ստացա բոլոր աշխարհի քարոզիչներից և Քրիստոնյաներից: Մեր որդին Բաբերթ Լեսլին վճարեց բոլոր ծախսերը: Նա մի խելացի և հաջող բիզնեսման է: Պատվելի Բուփերթ Մեդինան, Բեթսաիդա Քրիստոնյա եկեղեցու հովիվը Դոմինիկյան Հանրապետությունում, այստեղ այցելեցին և բացման աղոթքը աղոթեցին: Շատ հաճելի ժամ ունեցանք!

Մայիս 3-ին մեր պատգամները Օդիա լեզվով մեր համացանցին www.sermonsfortheworld.com ավելացավ: Օդիան Հնդկաստանի լեզուներից մեկն է: Այդ լեզուն

**ՂՈՒՔ ԿԱՐՈՂ ԵՔ ՀԱՐԻՒՐԱՎՈՐ ԲԱՌ-ԱՌ-ԲԱՌ ՊԱՏԳԱՄՆԵՐ ԵՒ ԴԱՍԵՐ ԿԱՐԴԱԼ
ՔԱՌԱՍՈՒՆ-ՎԵՅ ԼԵԶՈՒՆԵՐՈՎ WWW.SERMONSFORTHEWORLD.COM**

ավելի քան 30 միլիոն մարդկանց առաջին լեզուն է! Ես ոչ մի դրամ չեմ պահանջում այս պատգամների համար: Իմ միակ ցանկությունն է Բարի Լուրը տարածել բոլոր աշխարհում հնարավոր բոլոր լեզուներով: Այդ պատճառով այս պատգամների համար հեղինակային իրավունք չենք ստացել, և մարդիկ կարող են դրանց քարոզել և օգտագործել ինչպես ցանկանում են: Ամեն շաբաթ էլեկտրոնային նամակներ ենք ստանում տարբեր երկրներից շնորհակալություն հայտնելով այս պատգամների համար:

Մայիս 14-ին մի մեծ առիթ ունեցանք: Մեր թոռնիկը Բաբերթ Լեալի Հայմերզ IV ծնվեց! Նա մեր որդի Բաբերթի և իր կնոջ Ջինի տղան է: Նրանք նաև երկու աղջիկներ ունեն, Հանան և Սարան: Այս նոր մանուկը մեր առաջին և միակ տղա թոռնիկն է: Ես նրան կոչում եմ “Փոքրիկ Բաբ”: Նա անուշիկ մի տղա է, և ես աղոթում եմ որ Աստուած նրան կանչի քարոզիչ լինելու!

Քրիստոս ինձ լավ և վատ ժամանակներում գորացրել է, քաղցածության ժամանակ կամ կուշտ ժամանակ, ճիտության մեջ կամ կարեկցության մեջ: Հունիս ամսում ուղեղի կաթված ունեցա: Այն ժամանակվանից տնում հանգստանում եմ: Օգնության համար մի մասնագետ ինամատար ունեմ, բայց ամենամեծ օգնականը իմ կինը Իլիանան է: Սրանովհանդերձ, ես երբեք Ավետարանչության ծառայությունը չեմ դադարելու: Ամեն շաբաթ վիդեոյով պատգամներ եմ արձանագրում որը մեր եկեղեցում և համացանցում ցուցադրվում է: Իմ բոլոր կյանքում Քրիստոս ինձ գորացնում է!

Ես հաճախ իմ եկեղեցում պատմել եմ Մերելին Ֆարնիկի կյանքի մասին: Երբ նա պատանի էր նա ապրում էր Սան Ֆրանսիսկոյի Մարին շրջաօրանում: Մերելինը վստահեց Հիսուսին բայց նրա մայրը ավելի ուրախ կ'լիներ եթե Մերելինը թմրեցուցիչ օգտագործեր կամ տղաների հետ սեռային հարաբերություն ունենար – այս մայրը ոչ մի բաժին չէր ուզում ունենալ Քրիստոսի հետ! Նա Մերելինին տնից դուրս հանեց: Բայց Մերելինը Փրկչին հավատարիմ մնաց: Նա իր ամուսնու Ջերիի հետ միախոնրական ծառայության մեջ է Չեք հանրապետությունում: Օգոստոս 26 -ին Ջերին և Մերելինը ինձ մեր տնում այցելեցին: Նրանք իրեն ծառայությունից բացատրություններ ներկայացրեցին որը մենք վիդիոյի քաշեցինք և եկեղեցում ցուցադրեցինք: Նրանք մեծ օրհնություն են! Ինչքան հիանալի է տեսնել Աստծո շնորհքը որ փրկում է մարդկանց և նրանք օգտագործում Իր փառքի համար: Ինչպես Հովհաննես առաքյալն է ասել, “Սորանից ավելի մեծ ուրախություն չ'ունիմ, որ լսում եմ թե իմ որդիները ճշմարտության մեջ են գնում:” (3 Հովհաննես 4)

Օգոստոս 29-ին Ջաք Գանը եկեղեցում ներկայացավ իբրև մեր նոր հովիվը: Ջաքը Ամերիկայում ծնված Չինացի է: Նա ամուսնացած է և երկու երեխանների հայր է: Ես էլ վաստակավոր հովիվն եմ, նրան սովորեցնում եմ հովվության աշխատանքի մասին: Իմ հովիվը Դկ. Թիմոթին էլ ինձ է սովորեցրել: Եղբայր Գանը շատ լավ Քրիստոնյա է և մենք նրա վրա մեծ հույսեր ունենք: Խնդրում եմ մեր նոր եկեղեցու և նրա ծառայության համար աղոթեք:

Սեպտեմբեր 22-ին մեր եկեղեցու Սան Գաբրիելի շենքի վերակառուցման աշխատանքը սկսեցինք և մյուս տարի պատրաստ է լինելու: Շենքը գտնվում է Չինացի համայնքում:

Հոկտեմբերում Իլիանայի հայրը Բաֆայել Քիլերան Գուաթեմալայից այցելության եկավ և մեր տնում մի քանի շաբաթներ մնաց: Նա մի համեստ և ազնիվ մարդ է, կենսունակ և գործունյա – հետաքրքիր է իմանալ որ նա 90-ից ավելի տարիք ունի! Մենք նրա 91 ամյակը տոնեցինք մեր տնում Հոկտեմբեր 29 մեր եկեղեցու ժողովրդով:

Նոյեմբեր 21-ին մեր բոլոր եկեղեցու անդամներով տոնեցինք Գոհաբանության տոնը մեր տնում: Շատ համով ընթրիք ունեցաք! Մեր շնորհակալությունները ուղղում ենք Իլիանային, Ջաք Գանին, և մեր սարգավակ Մանուել Մենսիային կերակուրները պատրաստելու համար:

Բավականին հետաքրքիր տարի էր! Բոլոր փառքը թող լինի Աստծուն որ մեր աղոթքներին պատասխանեց և Քրիստոսին որ մեր հոգիները փրկեց: Սա ինձ հիշեցնում է Ջորջ Բեվերլիի երգի բառեր որը երգեց Բիլի Գրահամի Ավետարանչական արշավում, Սկաթլանդիաում, 1991-ին:

Շնորհակալ եմ, ով իմ Հայր, Քո Որդուն մեզ տալու համար
Եւ թողնելու Քո Հոգուն մինչև Քո գործը աշխարհում վերջանա:
(“There Is a Redeemer”, Keith Green, 1953-1982)

Երբ տոնում ենք Փրկիչի ծնունդը եկեք գոչենք, “Շնորհակալ ենք, Տեր Աստված: Թող որ Հիսուս Քրիստոս փառավորվի!”



Հարգանքով՝ Հիսուսի Անունով,

Պատվելի Բ.Լ. Հայմերգ,
D.Min., D.Rel., Th.D., Litt.D.
Փիլիպեցիս 4:13

Առաջի շաբթի կենտրոնում ես եմ իմ թոռնիկներին հետ, Հանան ձախում և Սարան աջում: Հետեվի շաբթում Ձախից աջ: Իլիանայի հայրը Բաֆայել Քուէլարն է, Իլիանայի մայրը Լինդան, Բաբերթ Լեալիի կինը Ջինը, փոքրիկ Բաբը իր հոր Բաբերթի գրկում, մեր տղան Վեսլին, և Իլիանայի քույրը Իվեթ Քուէլարը:

**ԴՈՒՔ ԿԱՐՈՂ ԵՔ ՀԱՐԻԻՐԱՎՈՐ ԲԱՆ-ԱՆ-ԲԱՆ ՊԱՏԳԱՄՆԵՐ ԵՒ ԴԱՍԵՐ ԿԱՐԴԱԼ
ՔԱՆԱՍՈՒՆ-ՎԵՑ ԼԵԶՈՒՆԵՐՈՎ WWW.SERMONSFORTHEWORLD.COM**